

ԲԱԺԱՆՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պոչկարիոյ համար
 Տարեկան 12 Ձր.
 Վեցամսեայ 6 »
 Արասահմանի հա-
 մար Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Ամերիկայի համար
 Տարեկան 3 ՏՂ.
 Վեցամսեայ 1.50 »
 ԿԱՆՔԻՎ ԿՃԱՐԵԼԻ

Վաճառքի սուրճի անոթի
 երեսին համար 40 սանթիմ
 և իսկ վերջին երեսի հա-
 մար 20 սանթիմ և երեքեկ
 անի անխախտ համար
 20 ՕԿՂ կըլլայ:

Պոչկարիոյ համար ձեռքի
 (15 ՍԱՆԹԻՄ)

ՇԱԲԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՒԿՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նամակ և գրամ գրելի
 Խմբագրութեան հասցիի

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.

Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

Կրթութեան և չնն տրուի

Արասահմանի համար ձեռքի
 (20 ՍԱՆԹԻՄ)

ՎԵՐՁԻՆ ԶԵՆՔԵՐՆԻՆ

Երբ ալ կը սպասեն իրենց բաժնատանքի և շարախօսութեան ամբողջ ուղղման թերթը, ու երբ հրապարակուի, յայտնի, որոշ կերպով բան մը չեն կրնար բռնի հայ վարժապետի իրական արժանիքին, կարողութեանը, բարոյականին և օգտակարութեանը մասին, կը գիմեն իրենց վերին զէնքին, կը սկսին տուներու կամ սրճարաններու անկիւնները աւանդէ սկանջ փոփոխել, — սնահաւատ են, անհաւատ:

Անհաւատ. ինչ հրէշային բան, ու մենք մեր զուակները յանձնած ենք անոնց, որպէս զի ուղղամուն պէս խղճեն անոնց մէջ ծրող բարոյականի և կրօնի բեղմնաւոր սերմերը, անոնց մատուցող հոգին ու սիրտը թունաւորեն իրենց անկրօն, տիրարոյան սկզբունքներովը: Զէ՛, պէտք է բորբոքել հաստատունական խարոյկը և անոր վրայ ողջ ողջ այրել այդ անհաւատ, անաստուած վարժապետները:

Եւ հաւատացէք կը գործադրէին ալ թէ երբեք իշխանութիւն ունենային:

Աւայդ զուգիւրի, սա՞մ միջոցին կը գիմէ չէ թէ միայն բողոքական պատուելին, որուն կուզէ այսօր պաշտօնակցիցս, Պիօնեան իր «Բաց Նամակը», այլևս կախարիկ վերապատուելին, հայ վարժապետն և տէրտէրը, զնչու խրմագիրը և նոյնիսկ պատահական, բազմակնգիր վարժապետը:

Նոր երեսնամբ մը չէ ասի միշտ եղած է ու պիտի ըլլայ, քանի որ կայ հինին ու նորին անվարձան կռիւր, քանի որ գոյութիւն ունի իրական արժանիքին թով սողուն ապիկարութիւնը և օգտակար ու անձնուէր գործունէութեան մօտ անձնական գծով, անխիղճ հաշիւը: Եւ անոնք որ սչինչով չեն կարող համեմատուիլ իրենց հակաակորդներու հետ, չեն համարձակիր ճակատաբաց կռիւ մղել, և անպատճառ կուզեն սղջային մանկտին շահագործել և

կամ իրենց քինախնդիր սիրտը զովացնել, միշտ կը գիմեն այս վերջնական զէնքին: — Պէ՛ ապա՛ր անոնք անհաւատ են:

Մենք բոլորովին անտարբեր և արհամարհանքով պիտի անցնէինք այդ աղտոտութեանց քովէն, եթէ երբեք չի տեսնայինք ատոնց մասնակի յաջողութիւնը:

Միամիտ, տգէտ մարդիկ ունինք, որոնք շուտով կը խաբուեն աւետարանի բառերով համեմտած խօսքից և կամ կատարեալ հաւատք ունենալով կրօնականի յետ սքեմին վրայ, անգիտակցաբար զո՞հ կերթան անոնց խարդաւաններին, իրենց զուակները հանելով աղջային վարժարանէն և կամ վարժարանէն դուրս վանելով ենթագրեալ անաստուած, անհաստ ուսուցիչը:

Եւ միշտ տուժողը կըլլայ մեր մանուկը:

Քանիցս այս էջերուն մէջ հրաւեր կարգացած ենք թէ անոնք որ հայ վարժապետը, հայ վարժարանը քննադատելու փափաքը ունին, թող հրամմեն զան ապարէզ վիստացի, որոշ կէտերու վրայ հիմնուած սակայն Բայց ատոնք խոյս կուտան, զիմակներու ետեւ ապաստանած, անորոշ տարտամ հաշիւներով ջուրին երեսը ելլել կը փորձեն և կամ երբ չեն յաջողիր իրենց մեղապարտ հաշիւներուն մէջ, անխնայ կը գործածեն ամէն անապնիւ և վատ զէնք:

Մեր պղ աքհամարհանքը նետելով այդ պիտիներու երեսին, կը զգուշացնենք մեր ժողովուրդը որ ականջ չի կախեն այդ պիտի նպատակաւոր, յիմար առասպելներու, և թող հաւատան թէ ենթագրուած անհաւատ, անաստուած վարժապետին կրօնքը, բարոյականը աւելի բարձր, աւելի մաքուր է քան պատառ մը հացի համար ամէն ստորնութեանց գիւմող պատուելիին, վարժապետին վարժապետին կրօնքն ու բարոյականը:

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ
 —(—)

ԲԱՑ ՆԱՍԱԿ

ՊԱՏ. ՀԱՅԿ ԵԱՐՏՄԵԱՆԻ

Յարգոյ պատուելի,
 Ձեզ հետ ս' եւ է խնդիր ունենալու արտօմ ու փափաք ընաւ չզգացած աստեան իսկ՝ երբ այս նամակը գրելու կը հարկադրուիմ մեղաւորը ես չեմ, այլ զուր, որ ձեր ընթացքով զիս հրապարակուած ձեր մասին խօսելու անհրաժեշտ հարկին սակ կը գնէք: Եւ եթէ այս առթիւ կարգ մը Լուսաւորչական հայերու պէս ձեր անձին ու գործին ձեր գովարանը չեմ ըլլար, գործես մեղաւորը ես չեմ: Կուզէի սրտանց կը փափաքէի որ իբրեւ հանրային գործիչ ձեզ մեղադրելու ոչինչ գտնէի և այդ պատճառաւ իսկ մինչեւ հիմայ լուս կը մնայի, թէք վաղուց կուտած էի, որ զուր մար հայաստան սիրուն հայրենիք, սիրելի ազգ» և այլ սովորական դարձած բողոքանքներուն հերով մեր ներկայ վիճակը աւագած աստեանի իսկ չէիք զարգրի ձեր հաւատքի ստուտուրը, նոյնիսկ որսալու գործը ամէն զնով ասալ ասնիլ:

Ես համոզուած եմ և զուր ալ չէք ուրանար անշուշտ, որ ձեր բոլոր գործունէութեան վերջին նպատակը հայ Լուսաւորչական քրիստոնեային բողոքական քրիստոնեայի դարձնելն է: Քարոզ, աղօթք, պարզ ու դաստիարակութիւն այդ նպատակին կը ծառայենք: Նուր, որ ամէն առթիւ փղձկելու տրամադիր ազգասիրական այնքան շիտուխ զգացումներ ունիք, զուր, որ չնորհիւ այդ զգացումներուն ձեր գործունէութիւնը միայն ու միայն ազգին օգտին նուիրած ըլլալ կը թուիք, չեմ հասկնար թէ ինչ օգուտ կը տեսնէք ազգին համար դասանքի փոփոխութեան մէջ, ինչ որ ալ ըլլայ ձեր համոզումը այդ մասին, կը խնդրեմ որ քիչ մը չափաւորաւ եռանդով գործէք, որպէս զի ձեր նպատակին հասնելու համար անողակի և նոյնիսկ անապնիւ միջոցներ ընտրելով ձախող ընթացք մէջ չգտնուիք:

Ուրիշ կերպ չմեկնելու համար ձեր չափազանց եռանդին կուտամ այն աննպատ քորակալեսուսը, զոր զուր այնքան անճարակի կերպով սկսած էք ընել իբրեւ ուսուցիչ իմ անձիս և հետեւաբար իմ պաշտօնավարած վարժարանիս հանդէպ: Յարգոյ պատուելի, ձեր այդ ընթացքէն շատ առնուելուս և կարեւորութիւն տալուս համար չէ, այլ ձեզ հրաւեր կարգաւոր նպատակով է որ կը գրեմ այս սողերը՝ որպէս զի ինչ որ սուսնէ տուն պատելով իմ և ազգային վար-

ժարունին նկատմամբ կը խօսիք հաճիք զայն հրապարակուած ըսել, Այդպէս կարծեմ աւելի օգտակար կրնաք ըլլալ և իբր աւելի աննեղ անձնաւորութիւն կրնաք հանդիսանալ:

Թուականէս գրեթէ երկու տարի ասալ վառնայի ժողովարանին մէջ բարոյական իմաստասիրութեան դաստիարակութիւն մը սկսած էիք, Բնական օրէնքներու մասին հոն պարզեցիք տեսութեան մը որուն դէմ էի և քննադատական մը գրեցի 1898 թ. նոյնմիտի սկիզբները լոյս տեսնող Իրաւունք լրագրի երկու թիւերուն մէջ: Դուք այդ քննադատականիս երկարապատում պատասխան մը խրմբագրեցիք որ չհրատարակուեցաւ, բայց ես ձեռք առնելով կարողացի զայն և բնաւ համոզիչ չգտայ ու հրատարակուած չըլլալուն համար աւելորդ համարեցի պատասխանել:

Այդ թուականէն ի վեր անցած են քսան երկու երկար ամիսներ և անկէ ի վեր աշխարհիս վրայ շատ բաներ փոխուած են: Քուպան ազատուած, Ֆիլիպիններու սպտամբուլութիւնը զսպում, կրէպէն իր անկախութիւնը գտած, Ֆաշտան նուաճուած, Անկլո-թրանսվալիան պատերազմը վերջանալու մօտեցած, Չինական վայրագութիւնները զսպուած են ու զեռ գուք, յարգոյ պատուելի այդ աննշան քննադատական չէք մոռցած, և զանի ձեր պատասխանին միացնելով պրակ մը կազմած էք ու մատի փաթեթը ըրած մաքր պղտորելու նպատակաւ ասոր անոր կը կարգաք եղեր:

Ձեր գրածները և անոնց հետ առնչութիւն ունեցող ուրիշներու ալ գրութիւնները հետաքրքրութեան համար բարեկամներու կարգալ իրաւունքներէ և, ատոր ոչ ոք բան կըրնայ ըսել, բայց այդ պատրուակաւ ուրիշ գրութիւնը բո՞քքը, ամէն մէկ սողին կամայական մեկնութիւններ տալ, առասպելներ պատմել գրողին անձը յետին նպատակներով վարկաբեկելու համար, բնաւ ներելի և տանելի չէ:

Արդ՝ յարգոյ պատուելի, զուր իմ քննադատականս ճիշդ այդ եղանակաւ կարգացած, իմ յայտնած գաղափարներս ձեզ հաճոյ թուած ձեռով բացատրած էք, և բաւական չէ որ զիս իբրեւ արտառոց համոզմունքներու տէր մէկը ուղեր էք ներկայացնել, ուրիշ առասպելներ ալ աւելցուցած էք իմ մասին, իբր թէ զուր ինձ խնայած էք եղեր և ասպետութեն չէք ուզած ձեր պատասխանը հրատարակել, որպէս զի իմ թունդ նիւթապաշտութեանս համար վառնայի վարժարանաց Պատ. Հոգաբար-

ձուլիւնը զիս պաշտօնէս չզրկէ: Ձեր այդքան բարեաց փոխարէն չպիտի կրնայի երախտագիտութիւնս յայտնել, եթէ չի գիտնայի, որ դուք էիք յայտարարողը Վառնայի ժողովարանին մէջ՝ թէ ձեր պատասխանը թերթերը հրատարակել չուզելուն համար ստիպուած էք զայն ժողովարանին մէջ կարողալ: Թէեւ այդ խոստումն իդ ալ չի պահեցիք:

Բայց թերեւս հիմա է որ կուզէք յարգել ձեր խոստումը: Թերեւս այդ պատճառաւ է որ երկու տարի յետոյ ձեր այդ համբաւաւոր պատասխանը եւ քննադատական ասոր անոր մտաքերը պղտորելու կը ծառայեցնէք: Արդեօք այդ սեռակ միջոցներու դիմելով է որ ձեր դպրոցի աշակերտներու թիւը այս տարի կրկնելով կուզէք 50ի բարձրացնել: Եթէ այդպէս է, դուք սխալ, շատ սխալ ճամբու մը կը հետեւիք, ազգային վարժարանը չի կրնար բաղդատուիլ ձերիւնին հետ եւ չուզէք երբեք այդ սեռակ միջոցներով ձեզ հետ մրցիլ: Եւ ինչպիսի գոյութեան իրաւունքը ունի ոչ միայն իր անհրաժեշտութեան այլ եւ օգտակարութեան մէջ: Ո՞րն է ձեր բողոքական պատուելի անհատական դպրանոցին գոյութեան իրաւունքը ազգային վարժարանի շուքին տակ հայ Լուսաւորչական եկեղեցւոյ պատին կուշտը: Ի՞նչ է ձեր բարձրումը եւ համոզումը հայ տղոց դաստիարակութեան եւ կրթութեան նկատմամբ, ո՞րն է ձեր ուսումնական ծրագիրը, որոնք են ձեր գործադրած մէթոտները, ի՞նչ է ձեր վարժարանին մանկավարժական կազմակերպութիւնը: Ահա ասոնք են այն կէտերը զորս պարտաւոր էիք ժողովրդին պարզել. երբ կուզէք աստիճանութիւն մը ցոյց տալ ազգային վարժարանին վրայ, եւ ձեր գոյութեան իրաւունքը ստեղծել: Դուք խնամոտ յոռութիւն մը պահեցիք այդ բոլորի մասին. խոյս տուիք մեր բոլոր հարցումներուն բացատրութիւն, եւ պահանջներուն գոհացում տալէ: Կերեւի ձեր ուղղութիւնն ու համոզումը ծածկելով, միշտ խորհրդաւոր մնալով, ուրիշ միջոցներ ընտրած էք յաջողելու համար: Բայց ես ձեր գոյնը բաւական ճանչցած եմ ձեր իսկ հրապարակաւ արտասանած խօսքերէն, յառաջադրած նպատակնիդ եւ անոր հասնելու համար ընտրած միջոցնիդ կուսած եմ:

Դուք էիք, որ ձեր վարժարանի աշակերտաց վիճակացոյցներու բաշխման հանդէսին, խոսն բազմութեան մը յայտարարեցիք թէ՛ ձեռ իրրեւ

կղերական, իրրեւ բողոքական քարոզիչ չեմ կրնար գործել ասոնց ասանս մօտ: Բնակարանիս մէջ վարժարան մը ունենալու», դարձեալ դուք էիք, որ դպրոցի կարեւորութիւնը բացատրելու համար կաւելցնէիք, «բրնոյութիւնը սրտեղբու մէջ է, զանոնք պէտք է փոխենք եւ աս դպրոցով կրնայ»:

Ուրեմն դուք իրրեւ բողոքական քարոզիչ ձեր կրօնական բրտրականտան ընկու համար դպրոցի պէտք ունիք, որպէսզի անոր միջոցաւ սրտերը փոխէք եւ ձեր ուզած մարդերը պատրաստէք, այդ քացայայտ է: Բայց ասոր համար անուղակի միջոցներու մի դիմէք, յօդուած մը մասի փոխմիջոց ընելով զիս եւ ինչմով վարժարանը անուղակի կերպով վարկաբեկելու մի ճգնիք, որովհետեւ այդ բնթացքը ձեզ պատուաբեր չըլլայէ գտտ ձեռնառու այ չի կրնար ըլլալ: Եթէ հայ կղերականը ձեռները ծալած անտարբեր կը նստի ձեր մարդորսութեան գործին հանդէպ, հայ ուսուցիչը չի թողոր որ վարժարանին եւ իր պատիւը խաղաղի ըլլայ ձեր եւ ձեզի պէտքերուն ձեռքը: Ազգային վարժարանին հետ մրցեցէք ձեր իրրեւ դաստիարակ ունեցած կարողութիւններով, բայց յաճախորդ ճարտար համար ամէն միջոց ազնիւ համարելով խանութպանի գերը մի ստանձնէք:

ԿԱՐԱՊԵՏ ՊԻՕՆԵՆԷ,
Ֆիլիպէ, 22 Օգոստոս

ԳԵՐՄԱՆԱՅԻՆԵՐԸ ԵՒ ՍԵՐ ՈՐԲԵՆԸ

Մեծ շարժութիւն ի վեր եւրոպական մամուլն ու ժողովուրդները զազարած են հայկական հարցով զբաղելէ: Մեր խնդիրը քաղաքական աւելի ծանր հարցերու քով իր կարեւորութիւնը կորսնցուցած է ուրիշները մեզմով զբաղեցնելու համար եւ մինչեւ անգամ Հայաստանի խորքերը կատարուած մասնակի շարժերու արձագանգները պաղարիւնութեամբ կը կարգացուին մամուլի մէջ: Հայաստանի բոլոր, աւելի ճիշդ է ըսել մարգասէրներու փոքր շրջանին մէջ այսօր մէկ բանով միայն կը հետաքրքրուին. մեր որբերով, Հալաբաւոր որբերու հաց ու կրթութիւն տալու եւ

այդպէսով շարժի աղէտալի հետեւանքներուն սաստկութիւնը գէթ մէկ աստիճան մեղմացնելու ջանքը մէկ քանի երկիրներու մէջ վերջին ժամանակներս շատ որոշ կերպով կը տեսնուի եւ այսօր ասեմբլեան, անգլիական, զուրեցեղական ու գերմանական զանազան մասնախումբեր մեր երկրին մէջ անգործներու համար գործ կը ստեղծեն, պզտիկ գրամագլուխներ կը հայթայթեն, եւ հալաբաւոր որբեր մասնաւոր որբանոցներու մէջ կը պատուարեն ու կը խնամեն:

Անշուշտ օտարներէն աւելի որբերու վիճակը մեր վրայ աւելի մեծ պարտականութիւններ կը դնէր եւ արգարեւ երկրի մէջ Պատրիարքարանը ու արքայապետ մանի մէջ Որբանոցները ու Որբանոցները կաշխատին այս պարտականութիւնը կատարել, բայց հասցիներու նուազութիւնը ամէն բարի կամք չլատումի կը դատապարտէ այսօր: Պատրիարքարանը զաւանդներէ եկած խնդրանքներուն գոհացում չի կրնար տալ, նպաստի սնունդը երբեմն ամիսներով բան չըստանար, իսկ արտասահմանի հասցուցած օգնութիւնները շատ քիչ են: Մեր հարուստները որոնք ամէն հանրային գործի օգնելու ժամանակ փախուստի ճամբայ մը կը գտնան, կամ գործիչներու վրայ վստահութիւն չունենար կամ գործին վրայ հաստք չեն ունենար, որքան խնդրանքին առջեւ ալ լուռ մնացին: Պատրիարքարանը ստիպուեցաւ նորէն զիմել հասարակ ժողովրդին. գանձանակներով, պնակներով գրամ հաւաքեց ու արտասահմանի գործաւորները, աշխատաւորները իրենց արիւն քրտինքներով վստակած գրամին կոտորակներով որբեր որդեգրեցին: Այս կէտին վրայ շարժեր շատ ծանրանալ, մտաբացկանութիւն ըլլալ թերեւս այդ մարդոց ետեւէն այդչափ ինչալը: Այս տողերը գրելու առիթ կուտայ ինծի շարժմ մը առաջ

հոս մեր որբերու մասին կատարուած բանախօսութիւն մը եւ հանգանակութիւն մը: Լրագիրներու մէջ կարգալով որ գերմանական Հիլֆուպուտի (հայերու օգնող ընկերութիւն մը) անդամներէ մէկը հոս եկած է եւ բողոքականներու ժողովարանին մէջ պիտի խօսի հայերու մասին կը հետաքրքրուի իր թիւրքերը: Որոշեալ ժամանակին ժողովարանին ընդարձակ սրահը կը լեցուի այրերու եւ կիներու խուռն բաղմունքով մը եւ սփարակական երգէն ետքը վստիճօրը կը սխի իր ճառը, որուն կարեւոր կէտերը կուզենք նարժումալ ընթերցողներուն ծանօթացնել:

Աստիճանաբար նախ ջանաց մեր երկիրը ծանօթացնել ներկայեւրուն, «հին Կրթնութեան» (իր բառովը) պատմութիւնը ուրուագրեց մէկ քանի խօսքերով ու հայերը ներկայացուց իրրեւ աշխատող, տեղուն, բարի քրիստոնեայ ժողովուրդ մը ամէն կերպով ընդունակ քաղաքակրթութեան: Կարգ մը գոյապահութեան ետքը անցաւ մեր վերջին տարիներու քաղաքական ու տնտեսական կացութեան, խօսեցաւ շարժերուն վրայ որուն ամբողջ պատասխանատուութիւնը՝ հիմնուելով գեապաններու ու հիւպատաններու տեղեկագիրներուն վրայ, ձգեց կառավարութեան վրա եւ բաւական զօրաւոր կերպով յաջողեցաւ պատկերացնել «թիւրք ֆանատիկոսութեան վայրէջում» թիւնները հայ տարրին զէժն եւ այս վայրագութիւնները ընդհանուր կերպով յիշելէ ետքը Ուրֆայի շարժին մանրամասնութիւնները սկսաւ պատմել, որհին զանազան անկիւններէն կէս-խղզուած սոսկումի ձայներ սկսան լսուիլ: Մեր մտրթը կարծաքցած է ալ ցաւին սասակութեան տակ, բայց օտարներու անհաստատի երեւնալու աստիճան սոսկում կազդէ: Ջարժերէն անցաւ որբերու հարցին, որ արգէն բանախօսութեան բուն նիւթը պիտի կազմէր. բացատրելէ ետքը մեր սր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (2)

ԽԱՆԱՐԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

1897ի գարնան սկիզբներն էր Վառնա՝ որ հայ գաղթականութեան էն լսով ու էն յորդատատ հոսանքը ընդունած էր իր ծոցը: Իր գեւորութեան ծայրագոյն աստիճանին մէջն էր դեռ Հայերու անհուն բազմութիւն մը ամէն հասակէ, ամէն գոյնէ, գիշեր ցերեկ անոր սալարկներուն վրայ կալեծփուէր, մայթի բուն վրայ կը զեռար: Անգործներու պարը կերթար պատեղի պէս դիզուելի սրճարաններու մուխտա միմո-

լորտին մէջ, ուր վայրկեանական քաղաքագէտները յորանդող մարդերու առջեւ կը ճառատէին, կուսակցականները իրարու գլուխ կը պատէին: Անդին զրկուածները, անօթիները, որոնց սուրճի տալու ասանոց մը անգամ կը պակէր, հիւանդանոցին մէջն ու շուրջը կը հեծկտային, եւ կամ պարտեղներու անկիւնները կը կծկաէին թերանին հովին բացած:

Իսկ բախտէն երես տասներեւ շուտով մոռցած երեկուան անտոր աղէտին յիշատակը, շուտով մերկացած իրենցմէ ազգային սուգը, կեանքի մէջ իրենց սովորական ճամբուն կը վերակաէին. ելլել իկ սրճարանները, գիներտները լեցունելով աղիճներու պազոտ նայուածքներուն տակ գրպաններն զարտկելով, եւ պակաս չէին նստել մեր քիչ առաջ տեսած Տիբրան տղա Սղոցեանի պէս մարդիկ, որ իրենց բան գործ ըրած

էին, շնական կիրքերնին յագեցնելու համար ազգային թշուառութեան շուրջը սլքտալ եւ անոր մատակարարած մոլորուն թարմութիւններն ըմբոխել անյագօրէն ու անգթօրէն:

Գաղթականութեան այդ այլազան գանդուածին մէջ մտքի մշակներն ալ իրենց սեղը բուսած էին թոճի բոճի այդ օրերուն բարբերու գեղեցիկ կամ ազդ մերկացումներուն մէջ, անտիք ալ գործի վրայ էին: Ու երբ գորդը իր թերթը կը հիմնէր բանասեղծը կերպով կամ կուլար, զաստատուն դպրոց կը հիմնէր կամ գասեր կը փնտռէր, ազգասէրը փրկուութեան գործին համար ամէն օր ծրագրի կը կազմէր, հայ թատրոնի քանի մը հիմնաւոր ծառաներն ու սպասարկուներն ալ փորձեր կընէին հայոց հին գրասեղան թատրոնը վերականգնելու:

Պատմագրի պարտականութիւնը կը հարկադրէ զիս խստապահելու հոս որ, մտքի մշակներ, ու բոլոր այդ ձեռնարկները, հակառակ իրենց—ազգերն ծտայ լթիւն մը մտտուցած ըլլալու—փողփողուն չպարին. մասամբ հացի պահանջն կը ծնէին եւ մասամբ ալ վայրկեանական վաղանցուկ եռանդի մը բորբոքումէն, եւ որոնք անփորձ եւ շատ անպատալ իրենց աննկարագիր զեկավարներու ստալնորդութեամբ՝ ժողովուրդին օգտակար ըլլալու տեղ աղէտ մը, բեռ մը կը ըլլային անոր գլխուն:

Ի՞նչ էր հայու հոգեկան վիճակը այդ ստեղն: Ան՝ ահաւոր անցեալ մը ետեւը, անտանելի ներկայի մը սոսկայանքներուն տակ զալարուն եւ մութ ապագայի մը առջեւ սանձակած, իր գատելու, խորհելու եւ գործելու կամքը կորուսած էր բոլորովին:

բերուն ցաւալի վիճակը, անոնց սպանացող անխուսափելի կորուստը սովի, հալածանքներու, ջարդի սարսափներուն մէջ, խօսեցաւ օտարներու կողմէ եղած օգնութիւններու մասին: Միացեալ հասանգներու, Սովորոյ, Ձուրցերիոյ ու Գերմանիոյ մէջ կազմուած գոնազանքն կերպութիւններ այսօր կանոնաւոր գործունէութեամբ մը Հայաստանի մէջ հաստատած են որբանոցներ և այլ որբանոցներու մէջ վեց հազար որբեր կը պատասպարուին ու կը կրթուին: Այդ վեց հազարին երկու հազարը գերմանական ընկերութիւնը իր վրայ առած է, հաստատած է որբանոցներ Հայաստանի ու Պարսկաստանի մէջ և անոնցմէ զատ 60—65 որբեր ալ Գերմանիա յերթած է (Վիլհելմ Բրոտտօրֆ-Վիլհելմսթեյն): Առեւտրաբան ալ յետեւեւորութիւնները առիթեալ տեղացի սակայն թէ խնամուած որբերը համեմատաբար շատ քիչ են և պէտք է ոչ միայն այդ երկու հազարը պահել այլ և պէտք է նոր որբանոցներ հաստատել, նոր որբեր կորուստէ ազատելու համար, ու հրաւիրեց ներկաները որ աջակցին ընկերութեան այս գործին մէջ: Միեւնոյն ժամանակ ցուցուց այն միջոցները որոնցմով այդ աջակցութիւնը կը դիւրացուէր, ընկերութիւնը ամէն ցանկացողի կը յանձնէ հանգանակութեան տետրակ մը, որու միջոցով ընդունողը իր շրջանի մէջ հանգանակութեան կը ձեռնարկէ և իւրաքանչիւր եռամսեայի վերջը հաւաքուած գրամը կը յանձնէ ընկերութեան: Նաեւ ամէն մարդ որոշ գումարի մը փոխարէն կրնայ որբ որդեգրել արգէն հաստատուած որբանոցներու մէջ և որբն ու որդեգրողը ընկերութեան միջոցով նամակագրութեամբ իրարու հետ կը հաղորդակցին: անոնցմէ զատ ընկերութիւնը կը ընդունի նաեւ ճերմակեղէններ որբերու համար և կեդրոնը կը հրատարակէ ամսական տեղեկագիրք տետրակ մը ու

բոլոր բաժանորդագրութիւնն ալ հասցի յաղբուր մը կը կազմէ: Փասթօրը խօսքը վերջացնելէ ետքը ժողովուրդը սկսաւ ցրտի և երբ մէկ կողմէն ներկաներու մասը դուրս կելլէր, ուրիշներ հասարակեցան ատենախօսին շուրջը և մէկ քանին որբեր որդեգրեցին, հանգանակութեան տետրակներ խնդրեցին և ուրիշներ ալ բաժանորդ գրուեցան յիշուած հրատարակութիւններուն: մէկ ժամ տետր ատենախօսութիւնը իր արդիւնքը ունեցած էր:

Ս. Ծրայագրի (Պատէն). 1 Օգոստ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆ

Թէ՛ զիշերթիկ և Թէ՛ ցերեկեայ աշակերտաց ընդունելութեան համար այսօրու ընէ կարելի է դիմել վարժարանս, ամէն առտու ժամը 9—12, և պայմաններու մասին համաձայնիլ:

Տնօրէնութիւն

ՄԱՍՈՒԼԻ ԶՈՒՐՁ

Բաւական բան գրուեցաւ ու խօսուեցաւ Տ. Յ. Պօնճուզեանի հեղինակած Ընթերցարանի Բ. գրքին ու նոյնիսկ իր անձին վրայ ալ: Ինծի ուրիշ բան չէր մնար. բայց եթէ շարժական սակարկներու, հայճեպ պոստներու մէջ յիշատակութիւնով մը գոհանալ ու անցնիլ: Սակայն, պարագայ մը, օգոստոսեան այս վերմագին օրերուն մէջ, հեղինակին տուած յամառ աշխատութիւնը, իր գոսարգրին երրորդ հատորն ալ հասցնելու դպրոցներու վերամուտին, պարսականութիւն կը դնէ վրաս անգամ մը անգրագանալ անոր վրայ:

Ունենալ գասագրիք մը, որ գոհացնէ ամէն պահանջ, ամէն անակը՝ քանզի գասաւանդութեան եղանակի, ձեւի մասին, փափաքելի բայց անկարելի բուսած բաներէն է: Որքան ալ խնամքով պատրաստուած ըլլան անոնք, աւելի կամ նուազ չափով միշտ պիտի ունենան իրենց թերի կողմերը, և կամ մասնաւոր

նոր պահանքի պիտի գտնեն անոր մէջ:

Բնական է որ Տ. Պօնճուզեան ալ իր Ընթերցարանները լեզուի, մեթոտի, դասաւանդութեան եւ այլն կողմէ իր կատարելագործուած դասագիրքեր հեղինակած ըլլալու յաւակնութիւնը չունի երբեք:

Բայց պէտք է խոստովանինք որ այս նոր Ընթերցարանները մեր միջուկէ հիմա ունեցած Ընթերցանութեան դասագրքերուն մէջ եղական տեղ մը կը գրաւեն իրենց նպատակայարմար ուղղութեամբ ու խնամաս պատրաստութեամբ:

Մանաւանդ Գ. տարին որուն արագորութեան մեծ մասը եղած կատարուած է և քիչ օրէն կատարի: Նախօրը երկու հրատարակութիւններուն ամբողջագումը պիտի ըլլայ:

Այդ Գ. գիրքը—տեսած եմ արագորուած պահներն ու մնացեալին ալ ձեռագիրները—տարւոյ չորս եղանակներու վրայ բաժնուած իր գիտական, աշխարհագրական, ընկերական եւ այլն շատ մը տեղեկութիւններուն հետ, ընդարձակ ծանօթութիւններ կը պարունակէ սպասարկին հին և նոր կեանքի, պատմութեան, աշխարհագրութեան, հնարասութեան վրայ:

Այնպէս որ կարող ուսուցիչ մը ձեռքին մէջ իր Ընթերցանութեան դասագիրք մը ծառայելէ զատ, կրնայ օգտակարակալ գործածուիլ նախապատրաստական կարգերու համար իր ազգային պատմութեան եւ աշխարհագրութեան յուշագիրք մը:

ԵՐՈՒՍԶ

ՏԵՂԵԿԱԲԵՐ

Այս խորագրին տակ պիտի ամփոփենք մեզի գրկուած բոլոր այն թղթակցութիւններն ու նամակները, որոնց ամբողջական հրատարակութիւնը անյարմար կը նկատենք:

Կը յուսանք, որ մեր աշխատակից թղթակիցներն ու նամակագիրներն ասկէ ետքը այս կէտը իրենց ուշադրութենէն չեն փախցնեն:

— Լօրէնս (Ամբրիկայ) Ոգոստոս 1 թու, անով կը գրէ Մպտեալ: «Պատուոյ ատենանի շուրջը յարուցուած արուեստական աղմուկը

զաղբում է: «Անկողմնակալ, չեզօք անունին տակ ծածկուած թունա կուսակցականները իրենց ծակելը վերադարձած են:

«Գանի մը շաքաթ առաջ ստոյգ աղբուրէ իմացայ, որ Ամբրիկայի Հայ. Յեղ. Դաշնակցութեան կետրոնական կոմիտէն, և Վերակազմեալներու Նահանգային վարչութիւնը՝ մասնաւորապէս միութեան և երկրորդականաբար Պառակտիչին խնդրովը զբաղելու համար բանակցութեան մէջ մտեր են եղեր: Այսպիսի քայլ մը երկու ամիս առաջ ալ առնուած էր Պօսթօնի մէջ, քաղաքին Դաշնակցական կոմիտէին և Վերակազմեալներու մասնաճիւղին մէջ, որուն հետեւանքը սակայն կանգիտանանք:

«Քաղաքիս նորակազմ Որբանոցն ընկերութիւնը 8 ամիսէ ի վեր կը շարունակէ իր եռամսեայ գործունէութիւնը. Գոլիս 15ին ընդհանուր ժողով գումարուեցաւ և վարչութիւն մը ընտրուեցաւ:

«Այս ընկերութիւնը քիչ ժամանակի մէջ յաջողեցաւ բաւական կոկիկ գրամ մը գոյացնել, և 70ի չափ ալ անգամ ունենալ»:

Ֆիլիպէէն Օգոստոս 11 թուականով Պ. Գ. Պօստեցեան կը գրէ մեզ թէ՛

Իր «Նարժում»ի 246րդ թիւին մէջ ըրած յայտարարութեամբ տուած տասնըհինգ օրուան պայմանաժամուն լրանալէն երկու օր առաջ Ֆիլիպէէն երկու մարդիկ նամակով մը ի դիմաց «պարոսասիրաց» ընկերութեան յայտարարեն են իրեն թէ ըստ տոմարի 1886 թուականէն 1028 դահեկան, ողջ գրամ պարտք ունի եղեր այդ ընկերութեան:

Ինք պահանջեր է այդ նամակագիրներէն որ հաճին իրենց տետրակները, մուրհակները բերել թաղական Խորհրդոյ առջեւ և հաստատել իր պարտքը և ա-

Իր գլխուն եկած փորձանքը այնքան հրէշային, այնքան յանկարծական եղած էր, որ կը սոսկար պաղարեւութեամբ մը անոր վրայ անգրագանալ ալ, իր չափազանց գրգռուած ջիղերը անկարող կը գտնուէին կը ընդունէր: չափել գասակ բոլոր եղածները և ուսումնասիրել անոր նախապատճառները:

Հայ գաղթական ժողովուրդը զեւէր կարող ըմբռնել այն տիեզերական մեծկակ անիրաւութիւնը, որ հանգէպ իրեն կատարուած էր: Դեռ այն հաւատքը ունէր՝ թէ երեկի ահաւոր փոթորիկին փութով պիտի յաջորդէր, անշուշտ ինքնաբերաբար փափաքուած խաղաղութիւնը Ոլիմպոսի բարձունքը, կամ Եօթներորդ կրկինին մէջ ներքող Գերագոյն Արարութիւնը պիտի արթնար, և իր վրէժխորի կայծակները թափելով անխնայաբար չարագործներու

գլխուն, պիտի ամխացնէր զանոնք: կամ քաղաքակիրթ աշխարհի մարդասէր պետութիւնները վերջապէս պիտի թօթուէին իրենց մեղք պարտանալերով թիւնը, անարդուած ինչին վրէժը պիտի լուծէին Իսլամի Մահիկէն, և հայոց բարբարական ժողովուրդը յաղթակն երգերով պիտի վերագանար իր երգիքը:

Միամիտ հաւատք: Եւ հայ գաղթականութիւնը, իր այս հաւատքին մէջը խարխաւած իր օրական կեանքէն դուրս, իր սպազային իր փրկութեան գործին համար ոչ մէկ շարժում, ոչ մէկ ջանք չէր ընէր:

Չէ՞ մի որ կրցածը ըրած էր, այսինքն շարժուած, անպատուած ու վաճառուած էր: Չէ՞ մի որ իր արիւնտ դատը Աստուծոյ և ընդհանուր մարդկութեան առջեւ պարզած էր պէտք էր ուրեմն անոնք կտրէին ար-

գար դատաստան ու վճիռ մը տային: Եւ ասոր համար իր թմբած, անզգայ անգործութեան մէջ, լարուած ուշադրութեամբ, անհամբեր կը սպասէր լուրերու, հեռագիրներու և թերթերու:

Սուտ ու փուս լուր մը, և նիսագրութիւն մը սեւ է անկարեւոր գէպ մը բաւական էր իրեն իբր ուղեցոյց ծառայելու իր միամիտ հաւատքին մէջ զինքը աւելի կաշկանդելու:

— Դեպքաններ Սուլթանին նոր գիմում մը ըրեր են եղեր:

— Չբահաւորները գէպի վոսփոր կուղեւորին եղեր:

— Չարը Լոնտոն կերթայ... և կամ Հայրիկ Բեթերսպուրկ կանչուած է եղեր և այլն և այլն:

Եւ բոլոր ասոնք իրականանային կամ ոչ, հայկական կեանքի, հարցի վրայ ամենաթեթեւ ազդեցութիւն

մը անգամ չէին ընէր:

Բայց մեր գաղթական եղբայրները առանց վստեղու իրենց ամենօրեայ յուսախաբութիւններուն մէջ, նորանոր գէպերու, սակակալութեանց վրայ կը թնամ, կը զգայնանան իրենց պատրանքի ինքնախաբէութեան շրջանակը, նորանոր օղակներ աւելցնելով անոր վրայ:

Եւ երբ է ըսել թէ այդ շրջանին մէջ բոլոր խոստեր և յոռեան տեսութիւններն ու մասնաւորները կը մերժուէին ու կը դատաւիտուէին:

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

(Շտաբումսկի)

սոր համար երեք օր պայմանա-
ժամ գրեր է, սակայն եկող գա-
ցող չէ եղեր :

Աստի համոզուած որ մէկը
քաջութիւն չի պիտի ունենայ եր-
բք օրինաւոր մարմնոյ մը առջեւ
գալով իրեն հետ դատուելու :
հրապարակաւ կը յայտարարէ թէ
այդ ստութիւնը հնարող կամ
հրատարակող մարդոց և «իրա-
ւունք» թերթին համար իր
տուած մակդիրներն բացարձա-
կապէս ճշմարիտ են :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Շարժ զոր Սուլթանին 25-մ-
եայ գահակալութեան յորեւեա-
նին առթիւ, Պատրիարքը Մայր-
եկեղեցոյ մէջ հանդիսաւոր ա-
զօթք կատարելէ ետքը Պալատ
գացեր է իր հետ ունենալով Ե-
րեցեան Գէորգ և Սյուզեան
Յովսէփ եպիսկոպոսները և Պա-
րիարքարանի գործակատար Տիգ-
րան էֆէնտին :

Պատրիարքը իր հետեւորդնե-
րուն հետ ներկայացրէ Սուլ-
թանին եւ մատուցեր է ուղերձը :

— Նիկոմիդիոյ Առաջնորդ
Ստեփաննոս եպիսկոպոս յորեւե-
եանի առթիւ յատկապէս Պոլիս
եկեր է, և իր վիճակայիններուն
կողմէն ուղերձ մը մատուցեր է
Սուլթանին :

Ստեփաննոս եպիսկոպոս յաջորդ
օրերը այցելել է Մեծ-Եպարքո-
սին, Ներքին և Ոստիկանական
գործոց նախարարներուն և իր
թեմին վերաբերեալ հոգային
խնդիրներու համար խնդրանք-
ներ ըրեր է :

Երանի թէ իր ուղերձը բարե-
րար ազդեցութիւն մը ունենար :

— Պատրիարքին պատրաստել
տուած Տիգրիւն-Թաշի մանրանկարը
Տիգրան էֆ. Ներսէսեան տարեր
է Պալատ և այս առթիւ Սուլթա-
նէն ստացեր է Ալայի Բ. ատտի-
ճան :

Աւ ըսել թէ Օրմանի պաշտօնա-
վարութիւնը և սողացող քաղա-
քականութիւնը հայ ազգին օգուտ
մը չի բերեր :

— Երեւանի մէջ Զանչեանցի
համար հոգեհանգիստ յատարե-
լէն յետոյ հայերը հանգանա-
կութիւն մը կատարեց և 1000
բուպլի հաւաքեր են : Այն գու-
մարով թեմական դպրանոցին մէջ
Զանչեանցի անունով որդեգիր
մը պիտի պահեն :

Ահա լաւագոյն եղանակը Զան-
չեանցի պէս Որբախնամ բարե-
րարի մը յիշատակը յարգելու :

— Էտիրնէի որբանոցին 14 ու-
բերը որոշուած ըլլալով տեղաու-
րել Ս. Յակոբայ Որբանոցին մէջ,
անոնցմէ չորսը արգէն Պոլիս ու-
ղարկուեր են : Էտիրնէցիք այս
որբերու համար 50 ոսկի տարե-
թոշակ պիտի վճարեն :

— Տատեան Արթին փաշա, ու-
րուն հիւանդութիւնը ծանուցած
էինք, սկսած է ապարինիլ :

— Բարիկի արուեստահանդէ-
սին մէջ վարձատրուած և «ճար-
ժում»ի մէջ հրաւարակուած հայ-
ազգի արուեստագէտներէն զատ,
Ռուսիան հայատակ Պ. Սթերեան
արժամ շքադրամ ստացեր է
ճարտարապետութեան ճիւղին :
Պ. Սեպուհ Պէկեան պատուոյ յի-
շատակութեան արժանացեր է
փորագրութեան և վիճակագրու-
թեան ճիւղին վերաբերեալ իր
ցուցագրութիւններուն համար,
և Ռուսահայ երաժշտագէտ Պ. Նի-
կոլայոս Տիգրանեան պղնձեայ
շքադրամ մը իր երաժշտական
աշխատութեանց համար :

— Խմբագրութեան մէջ ըն-
դունուած է «Խաւրիկ»ի Հայոց հեռոց
բարեգործական ընկերութեան
«Տեղեկագիր» և ժընէփի մէջ
նոր լոյս տեսնող «Սոցիալիստա-
կան Որգան Հանդէս» ամսագրի
Ա. տարուոյ 1 թիւը :

Վերջինիս հասցէն է
M. F. Wander Redaction du
«Handés»
Genève (Suisse)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Ամսոյս 19-ին Պոլիս մեծ հան-
դէսով տօնուեր է Սուլթանի գա-
հակալութեան յորեւեանը :

20-ի գիշերը կայսերական պա-
լատին մէջ սեղան մը տրուել է
Սուլթանին նախագահութեամբ ի
պատիւ օտար երկիրներէ եկած
պատուիրակութիւններուն :

Բոլոր պատուիրակներն ալ իւ-
րենց վեհապետներուն կողմէն
թանկագին նուէրներ տուեր են
Սուլթանին : Այս նուէրներուն
մէջ ուշագրութեան արժանի է
Չարին նուիրած սեղանի գեղա-
կերտ ժամացոյցը : (Արգեօք ժա-
մերդ համբուած են ըսել կողմէ
Չարը Սուլթանին) :

Սուլթանը փոխադարձաբար
պատուիրակներուն շնորհներ է
շքանշաններ :

— Ամսոյս 20-ի գիշերը Գատը-
Գեղի մէջ հրդեհ պատահեր է և
100-ի չափ տուներ այրեր են :

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Բեթերայուրիկի կառավարական
պաշտօնակալութիւնը զեկոյց մը հրա-
տարակեր է, որով կրտէ թէ կոմս
Համատորֆ, արտաքին գործոց նա-
խարարը, Չարին հրամանովը
հեռագիր մը ուղղեր է արտա-
սահմանի ռուս գեոպաններուն :
Այս հեռագիրը կը յայտարարէ
թէ Ռուսիա Չինաստանի մէջ հա-
սած է իր նպատակին, որ է
գեոպաններուն ազատութիւնը :
Ռուսիոյ երկրորդ գործը, այն է
Չինական օրինաւոր կառավարու-

թեան մը հաստատութիւնը դըժ-
ուարացած է Բէքիւի արքունի-
քին հեռանալովը :

Ռուսիա ուրիշ նպատակ չունի-
բարեկարգութիւնը հաստատե-
լուն պէս իր զօրքերը ետ պիտի
քաշէ Մանչուրիայէն :

Միացեալ Նահանգներն հաւա-
նած են այս առաջարկին և կը
փափաքին որ Դաշնակից բանակը
ետ քաշուի Բէքիւնէն :

Ստոյգ ազբիւրէ կը ծանուցուի
թէ Անգլիա, Գերմանիա և Իտա-
լիա յայտարարած են թէ պատ-
րաստ են իրենց զօրքերը քաշել
Բէքիւնէ ելծէ Ռուսիա պարպէ
Մանչուրիան :

Իսկ թէ Ռուսիա պիտի յարգէ
իր խոտուածը և պիտի պարպէ
Մանչուրիան որուն սէրն է այսօր
գրեթէ խնդիր է. և կամ Անգ-
լիա Գերմանիա և Ճապոն, որոնք
չարունակ նոր զօրքեր կը զրկեն
հոն և իրենց օտարունամուրտե-
ղեր կը պատարաստեն, պիտի թու-
զուին Չինաստան առանց մեծկակ
կրծօն մը առնելու, սա ալ երկ-
րորդ խնդիր է :

— Հասնական կը կարծուի որ
Չինկ իշխանին և Լի. Հունկ-Չանկի
յանձնուի Պետութեանց հետ բա-
նակցութեան մանալու զորքը. ու
նոնց պէտք է ընկերանան նախ-
քինի և Հան-Քէտի փոխարտ-
ները :

— Շանկայէն կը հեռագրեն թէ
Չինական կայսրը և այրի կայս-
րուհին հասեր են Թայ-Նէն, Շան-
Սի նահանգին մայրաքաղաքը :

— Անգլիական թերթ մը կը
գրէ թէ իշխան Բիւ-Չինկ, Թուան
իշխանի տղան, Չինոյ կայսր
պիտի հրատարակուի Ռուսիոյ
պաշտպանութեան տակ : Արիշ-
լուր մըն ալ կրտէ թէ Չինկ իշ-
խանը խնամակալ պիտի կար-
գուի :

Թ Ր Ա Ն Ս Ի Ա Լ

Լոնտոնի թերթերը կը հազո-
րեն որ Լորտ Ռոպերտս Պէլֆոտտի
մէջ յայտարարութիւն մը հանած
է որով Թրանովալ պաշտօնապէս
կցուած կը հաշակէ Անգլիական
պետութեան հետ :

— Բրէթօրիայէն օգուտու 31
(ն. Տ.) թուականով կը հեռագրեն
որ 500 Պօէրներ, որոնք ժամա-
նակէ մը ի վեր Եօհանէսպուրիկի
մօտերը կը գտնուէին, քաղաքին
մօտերը գտնուած բանտի մը վրայ
յարձակեր և աղտուեր են մէջի
բանտարկուածները :

Արիշ Պօէրներ ալ տեսնուած
ըլլալով տարբեր կողմեր, հե-
տեակազօրաց գուժարտակ մը
զրկուեր է վաննք ցրուելու :

— Քէլ-Թոունէ կը հեռագրեն
«Տէլի-Սէլի» թէ Տըվէթ զօ-
րավարը Վէնպուրիկի (Օրանժի մէջ)
երկաթուղոյն ճամբուն վրայ ե-
րեւցեր է :

— Պօէրները երեք գունդի
բաժնած պիտի գործեն ասկէ
ետքը :

Առաջին գունդը գացեր է Լիթ-
տէմպուրի, թերանոցները պաշտ
պանելու :

Երկրորդը կերթայ Պարպէր-
թոնի Պօէր կիները և սղաքները
պահպանելու :

Իսկ երրորդը երկաթուղոյ գի-
ծին ուղղութեամբ ետ կը քաշ-
ուի :

Այս վեջին գունդին մէջ կը
պանուին բոլոր Պօէր մեծ առձեռ-
ւորութիւնները, Քրիկէր, Վիլիս
և այլն :

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Վառնայի քաղաքապետութիւնը
պաշտօնակալ յայտարարութեամբ
մը կը ծանուցանէ թէ Սեպտեմբեր
27-ին մրցումի պիտի զնէ թա-
րունի մը շինութիւնը :

Շէնքը պիտի արժէ 300,000
ֆրանք :

— Կարձեալ նոյն քաղաքապե-
տութիւնը նուազուրդի դրած է
քաղաքիս ելեքարական լուսաու-
րութիւնը : 40 տարուան պայմա-
նաժամով վարձու տալու համար :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Ռուսներու և Եգիպտոսի զեռ
չը վճարող մեր բաժանորդներէն
կը խնդրենք որ հաճին փութա-
ցընել իրենց բաժնեկիները :

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԳ

Ազգային երկօս վարժարանաց
և մանկապարտէզի բացումը սե-
զի պիտի ունենայ յառաջիկայ
Սեպտեմբեր 1-ին և դասախօսու-
թիւնը պիտի սկսին նոյն ամսոյն
4-ին :

Ամէն անոնք որ վարժարանիս
աշակերտ և աշակերտուհի տալ
կուզեն, թող փութան վաղուընէ
սկսեալ իրենց զաւակաց անուն-
ները Հոգաբարձութեան ընդու-
նելու թեան տոմարին մէջ արձա-
նագրել տալու :

Ի դիմաց Ազգ. երկ. վարժարանաց
Հոգաբարձութեան

Վ. Ասենազարի Ասենապեա
Գ. Կիւլպիսեւեան Յ. Մ. Թովմասեան

ԱՂՊԿԱՆՆ ԿՐԹԱՐԱՆ

Վարժարանս կսկի իր հինգ-
րորդ տարուոյ շրջանը յառաջիկայ
Սեպտ. 1/14-ին. այս տարի աւելի
կուրիկ եւ կարգաւորեալ ծրագիր մը
գծած է իրեն համար :

Վարժարանս բարձրագոյն նախա-
կրթարանի մը բոլոր պահանջուած
պայմաններն ունի. լեզուներու մա-
սին ունի Հայերէն. Ֆրանսերէն.
Պուրկարիկն որք պարտաւորիչ են.
Անգլիերէնը՝ լոկ փաժաքողաց հա-
մար է :

Ընդունելութիւնք եւ մասնաւոր
տեսակցութիւնք կը կատարուին ա-
մէն օր եւրոպական ժամը 9-12 :

Տնօրէն

Աղլկանց Կրթարանի

Պ. Ճիլեւեան

Վառնա Գրդ. թաղ նօ. 40